

Պարոն Գագիկ Բեգլարյանին
Երևանի քաղաքապետ
Երևան, հայաստանի Հանրապետություն

ԺԽ-Ե-0000/10

Պատճեն՝

ՀՀ քաղաքաշինության նախարար պրն. Վ. Վարդանյանին

ՀՀ առողջապահության նախարար պրն. Հ. Քուշկյանին

ՀՀ բնապահպանության նախարար պրն. Ա. Հարությունյանին

ՀՀ Կառավարության վերահսկողական ծառայություն

Ինձ են դիմել Կոմիտասի 5ա, 3, եւ 7 շենքերի մի խումբ բնակիչներ, որոնք բողոքում են առ այն, որ Երևանի քաղաքապետարանի թույլտվությամբ մինչ օրս չհաստատված հատակագծով փորձ է արվում վերոնշյալ շենքերի անմիջապես հարեւանությամբ կառուցել բազմահարկ շենք, ինչպեսեւ տեղափոխել այնտեղ գոյություն ունեցող տրամվայ-տրոլեբուսներին սպասարկող բարձր լարման ենթակայանը տեղափոխել Կոմիտասի 5ա շենքի անմիջական հարեւանությամբ: Բնակիչների պնդմամբ այդպիսի կառուցապատումը ոչ միայն խախտում է քաղաքաշինական եւ մի շարք այլ նորմեր, այլեւ վտանգ է ներկայացնում իրենց առողջությանն ու կյանքին:

24.08.2010 Երևանի քաղաքապետարանի տարածած հաղորդագրության համաձայն, Երևանի քաղաքապետի 25.11.2005թ. որոշմամբ “Լիբեր” ՍՊԸ-ին բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու թույլատվություն է տվել «Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի տարածքում հատկացված հողակտորի վրա: Ըստ նույն հաղորդագրության՝ “Լիբեր” ՍՊԸ-ն պարտավորվել է տարածքում գտնվող հին ենթակայանի փոխարեն կառուցել նոր, տեխնիկապես ավելի արդիական ենթակայան”: Վերջապես, հաղորդագրության մեջ նշվում է, որ բնակելի շենքի եւ ենթակայանի կառուցման համար Երևանի քաղաքապետարանը տրամադրել է ճարտարապետա-հատակագծային առաջադրանք, նախագիծը համաձայնեցվել է եւ տրվել է թույլատվություն, իսկ նախագծային փաթեթը անցել է համապատասխան փորձաքննություն:

Բողոքին եւ գործի հանգամանքներին ծանոթանալու, ինչպես նաեւ թե սեփականատերերի եւ թե բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով դիմում ենք Ձեզ՝ ակնկալելով փաստաթղթերով հիմնավորված պատասխաններ, որոնք տրամադրվելու է նաեւ շենքի բնակիչներին:

1. Արդյո՞ք գոյություն ունի Կոմիտասի 5ա, 3, եւ 7 շենքերի միջեւ ընկած տարածքում քաղաքաշինական որեւէ ծրագիր: Այդպիսի ծրագրի առկայության պարագայում խնդրում ենք տրամադրել այդ ծրագրի պատճենը:
2. Խնդրում ենք տրամադրել մեզ հետեւյալ փաստաթղթերի պատճենները.
 - a. Երեւանի քաղաքապետի 25.11.2005թ.՝ Կոմիտասի 5ա հասցեում «Լիբեր» ՍՊԸ-ին բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու թույլատվություն տալու որոշման,
 - b. այդ հասցեում ծրագրվող նոր շինությունների ճարտարապետահատակագծային առաջադրանքների եւ այդ առաջադրանքներին կից կառուցապատողին տրամադրված «Շինարարության կազմակերպման պարտադիր պահանջների մասին» հավելվածի,
 - c. գլխավոր հատակագծերի,
 - d. շին. թույլտվությունների (մասնավորապես՝ Երեւանի քաղաքապետի կողմից 2010 թվականի հուլիսի 28-ին «Լիբեր» ՍՊԸ-ին տրված թիվ 01/50-15303-396 շինարարության թույլտվության),
 - e. կառուցապատողի կողմից Երեւանի քաղաքապետարանին համաձայնագրման համար ներկայացված շինհրապարակի կազմակերպման նախագծի, ներառելով օտարման գոտու եւ շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատի տեղակայման գծագրերը,
 - f. բնապահպանական, քաղաքաշինական եւ գոյություն ունեցող այլ հատուկ փորձաքննությունների ակտերի եւ այդ շինությունների հետ կապված առկա մյուս բոլոր փաստաթղթերի:
3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոմիտասի 5 հասցեում գտնվող տրամվայ-տրոլեյբուսների բարձր լարման էլեկտրական սնուցման (էլեկտրատրանսպորտի քարշի) ենթակայանի գործունեությունը, Կոմիտասի 5ա-ի բնակիչների պնդմամբ, տարիներ շարունակ հանդիսացել է իրենցից շատերի հիվանդության եւ/կամ մահի պատճառ, մինչդեռ այն, ըստ նոր ծրագրի քանդվելուց հետո կառուցվելու է 5ա շենքին շատ ավելի մոտ հարեւանությամբ, բացի այդ, այն հանգամանքը, որ բնակիչների ունեցած տեղեկություններով Կոմիտասի 5 հասցեում գտնվող այդ ենթակայանի տարածքում գոյություն ունի մեծ քանակությամբ սնդիկի «գերեզման»՝ խնդրում ենք պարզաբանել, թե արդյո՞ք իրականացվել է տրամվայ-տրոլեյբուսներին սպասարկող ենթակայանի նոր վայրում՝ 5ա շենքի անմիջական հարեւանությամբ կառուցելու առողջապահական որեւէ փորձաքննություն, կամ ստացվել է բնակիչների առողջության համար պատասխանատու որեւէ պատկան մարմնի թույլատվություն, եթե այո՝ խնդրում ենք ներկայացնել դրա պատճեն:
4. Խնդրում ենք տրամադրել Երեւանի քաղաքապետարանի 2005թ. կայացված այն որոշման պատճենը (համաձայն «Առավոտ» թերթի 2006-11-24 հրապարակման այդ որոշման ամսաթիվն ու համարն են՝ 08.02.2005թ. թիվ 184-Ա), որով նույն թվականին (համաձայն «Առավոտ» թերթի 2006-11-24 հրապարակման այն թվագրված է 2005թ. մարտի 29-ով) Արաբկիրի թաղապետը Երեւանի քաղաքապետի անունից քաղաքապետի նույն թվականի նոյեմբերին կայացված որոշման (համաձայն «Առավոտ» թերթի 2006-11-24 հրապարակման այդ որոշման ամսաթիվն ու համարն են՝ նոյեմբերի 25-ի հ. 2616-Ա) հիման վրա հողի վարձակալության պայմանագիր է կնքել «Լիբեր» ՍՊԸ-ի տնօրեն Ռ. Արաբյանի հետ առ այն, որ վերջինս Կոմիտասի 5 հասցեում վարձակալում է (թե գնո՞ւմ է) տարածք՝ բազմահարկ շենք կառուցելու նպատակով:

5. Խնդրում ենք պարզաբանել, թե ի՞նչ պատճառով է տարածքը «Լիբերին» տրվել առանց աճուրդի՝ ուղիղ վաճառքի ձևով:
6. Որքան հայտնի է, հողի կադաստրային արժեքը որոշվում է ըստ տարածքի գոտիակաության: Կոմիտաս 5 հասցեն, որտեղ «Լիբերը» տարածք է վարձակալել, համարվում է 3-րդ գոտի, սակայն, համաձայն «Առավոտ» թերթի 2006-11-24 հրապարակման՝ կնքված պայմանագրում այդ հասցեն ներառվել է 4-րդ գոտում, որտեղ հողի կադաստրային արժեքն ավելի էժան է, քան 3-րդ գոտում: Խնդրում ենք պարզաբանել նման փոխակերպման պատճառը:
7. Կոմիտասի 5ա-ի բնակիչների տեսանկարահանած նյութում երևում է, որ Կոմիտասի 5ա հասցեում գտնվող տրամվայ-տրոլեյբուսներին սպասարկող ենթակայանի տարածքում անհայտ անձիք, հավանաբար այդ տարածքի նոր սեփականատերերը/վարձակալները իրականացնում են ծառահատումներ (տեսանյութը կարող եք դիտել ինտերնետային <http://www.azatutyun.am/video/10007.html> հասցեով): Խնդրում ենք տեղեկացնել, թե արդյո՞ք քաղաքապետարանը թույլ է տվել ծառահատումներ իրականացնել նշված հասցեում: Եթե այո, ապա խնդրում եմ տրամադրել մեզ այդ թույլտվության պատճենը, իսկ եթե նման թույլտվություն քաղաքապետարանը չի տրամադրել, ապա խնդրում ենք տեղեկացնել մեզ, թե Երևանի քաղաքապետարանը ի՞նչ միջոցառումներ է իրականացնում այդ ապօրինի ծառահատումների իրականացնողներին վարչական պատժի/տուգանքի ենթարկելու եւ այդ տարածքում այսուհետ որեւէ ծառահատում թույլ չտալու ուղղությամբ:
8. Վերոնշյալ բազմաբնակարան շենքերից եւ ոչ մեկը չունի երեխաների համար թեկուզ ամենափոքր չափսերի խաղահրապարակ, իսկ բակը սահմանափակվում է մի քանի քառակուսի մետր կազմող պուրակով, որի հարեւանությամբ է գտնվում առողջությանը վնասող, քիմիական արտանետումներ ունեցող եւ աղմուկ հանող տրամվայ-տրոլեյբուսներին սպասարկող ենթակայան: Արդյո՞ք համապատասխանաբար են առողջապահական եւ քաղաքաշինական նորմերին առկա եւ քաղաքապետարանի թույլտվությամբ նախատեսվող բազմահարկ շենքի բակերի չափսերը եւ նրանց հարեւանությամբ տեղակայված ենթակայանի գտնվելու փաստը:

Հարգանք՝

Լարիսա Ալավերդյան

ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության քարտուղար